

Ալաշկերտ համայնքի ղեկավարի 2015 թվականի 7-րդ
կիսամյակի

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

9. Ալաշկերտ

17.07.2015թ.

Ալաշկերտ համայնքը ունենալով խաղողագործության և պտղաբուծության ուղղվածություն այս տարվա առաջին կիսամյակը բարենպաստ էր գյուղատնտեսության համար: 2015 թվականի առաջին կիսամյակում համայնքի բնակիչները հատկապես ծիրանի առատ բերք են ստացել: Նախորդ տարվա համեմատ ոռոգման խնդիր չի եղել: Հավաքագրվել է մոտ 4129400 դրամ հողի հարկ և 3432800 դրամ գույքահարկ:

Կատարվել են բազմաթիվ աշխատանքներ.

1. Եղեռնի 100-ամյակի և Հայրենական Մեծ Պատերազմի 75 ամյակի կապակցությամբ համայնքում կազմակերպվել և անցկացվել են տարբեր բնույթի միջոցառումներ:
2. Հորդառատ անձրևների պատճառով ճանապարհները խիստ վերանորոգման կարիք ունեն, կենտրոնական փողոցներում կատարվել են հարթեցման աշխատանքներ:
3. Խմելու ջրի խողովակաշարը կառուցված է 50-60-ական թվականներին, որը ունի վերանորոգման խիստ կարիք: Կատարվել են կենտրոնական փողոցի խողովակաշարի վերանորոգման աշխատանքներ: Բնակչությանը տրվում է խմելու ջուր առավոտյան ժամը 10.00-ից մինչև 16.00, գործարկվել է խմելու ջրի երկրորդ խորքային հորը:
4. Համայնքում պարբերաբար կատարվում է աղբաթափման աշխատանքներ անվճար /շաբաթը մեկ անգամ/: Գյուղի սանիտարական վիճակը գտնվում է բարվոք վիճակում:
5. Համայնքի կենտրոնական փողոցներում և գերեզմանատանը անցկացվել է ցերեկային լուսավորում:
6. Անցկացվել է 6 ավագանու նիստ, որոնք պատշաճ ժամկետներում ուղղվել են մարզպետարան, իսկ բյուջեում կատարված փոփոխությունները ուղարկվել է Արդարատության նախարարություն՝ փորձագիտական քննության:
7. Բնակիչներին տրվել են 300-ից ավել տեղեկանքներ և տարբեր բնույթի փաստաթղթերի պատճեններ:
8. Ժամանակին և պատշաճ կերպով զինկոմիսարիատի հետ անցկացրել ենք զինակոչիկների կցագրման աշխատանքներ:
9. Վիճվարչություն է ներկայացվել նաև տարբեր բնույթի հաշվետվություններ, իսկ Ֆինբաժին՝ տարբեր բնույթի ֆինանսական հաշվետվություններ:
10. Երաժշտական դպրոցին տրվել է ֆինանսական աջակցություն:
11. Մանկապարտեզի վերաբացվել էր ապրիլի 1-ից, հայտնի պատճառներով մայիսի 12-ին փակվեց:

2. Չնայած կատարված աշխատանքներին, համայնքում կան նաև չլուծված

հիմնախնդիրներ, որոնք բարձրացվեցին համայնքի բնակչության կողմից:

1. Համայնքում չի գործում կուլտուրայի տունը, որը գտնվում է վթարային վիճակում:

2. Խիստ վնասված և քայքայված է խմելու ջրի ցանցը, որը ունի ամբողջովին փոփոխման կարիք:

3. Մանկապարտեզը ունի վերանորոգման խնդիր, կազմված է վերանորոգման նախահաշիվը:

Համայնքի ղեկավարի 2015 թվականի առաջին կիսամյակի հաշվետվությանը մասնակցում էր մարզպետարանի ներկայացուցիչ՝ Գ. Սայադյանը:

Համայնքի ղեկավար



Կ. Հովհաննիսյան